# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԻ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Ավետման տոնի հուսառատ խորհրդով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում համայն մեր ժողովրդին և շնորհավորում կանանց՝ Մայրության ու գեղեցկության օրվա կապակցությամբ:

Փրկչի գալստյան մասին Սուրբ Աստվածածնին տրված հրեշտակածայն Ավետիսով այսօր նորոգվում են մեր հոգիները, հավատով զորանում՝ երկնքի բացված ողորմության ու շնորհի առջև:

Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ մեր կյանքում Աստծո ներկայության բարի լուրը հասփափվի ընտանեկան բոլոր հարկերից ներս և բերի օրհնություն, լույս ու խնդություն:

Սուրբ Աստվածածնի գթառատ բարեխոսությամբ հայցում ենք մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի խաղաղությունը աշխարհին, մեր Հայրենիքին ու ժողովրդին: Թող Տերը ամենառատ Իր շնորհներով զարդարի փիկնանց և օրիորդաց և ամենախնամ Իր հովանու ներքո պարգևի զավակներով օրհնյալ, արևշատ ու երջանիկ կյանք:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
7 ապրիլի 2005 թ.